Հավելված

ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 30-ի N 1758 -Ն որոշման

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓՈՎ ԵՎ ԿԱՐԳՈՎ ՈՐՈՇՎՈՂ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ (ԿԱՄ) ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐՆ ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՆՑԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Օրենքով սահմանված չափով և կարգով որոշվող՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու առումով հարկ վճարողներին ռիսկային համարելու չափանիշներն են՝

1) հարկ վճարողը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող՝ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող մեկ տարուց պակաս ժամանակահատվածում.

2) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող մեկ տարվա ընթացքում որևէ հաշվետու ժամանակաշրջանում գործարք չի իրականացրել.

3) ավելացված արժեքի հարկի և (կամ) ակցիզային հարկի հաշվանցումները և (կամ) վերադարձները հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 12-ամսյա ժամանակահատվածում հարկ վճարողի մոտ կատարվել են առանց ուսումնասիրության կամ ստուգման.

4) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող մեկ տարվա ընթացքում անցկացված հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձման ուսումնասիրությամբ կամ ստուգմամբ կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգմամբ հիմնավորված չի համարվել հարկ վճարողի դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարի 20 և ավելի տոկոսը.

5) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 18-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում հարկ վճարողի մոտ անցկացված հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձման ուսումնասիրությամբ կամ ստուգմամբ կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգմամբ «Հարկերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածին կամ «Ավելացված արժեքի հարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածին համապատասխան առաջադրված հարկի գումարի մեծությունը կազմել է ուսումնասիրվող կամ ստուգմամբ ընդգրկված ժամանակաշրջանի համար հարկ վճարողի կողմից ներկայացված՝ համապատասխան հարկատեսակի հաշվարկներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկի գումարի 10 և ավելի տոկոսը.

6) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 36-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում հարկ վճարողի նկատմամբ կիրառվել է «Հարկերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով սահմանված տուգանքը.

7) հարկ վճարողի դիմումի համաձայն առանց ուսումնասիրության կամ ստուգում իրա-կանացնելու օրենքով սահմանված կարգով որոշվող գումարը գերազանցող գումարով հաշ-վանցում և (կամ) վերադարձ կատարելու համար հարկ վճարողի նկատմամբ հաշվետու ժամա-նակաշրջանին նախորդող 18-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում կիրառվել է «Հարկերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված տուգանքը.

8) Հարկ վճարողի կողմից հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարը պակաս է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցած՝ հարկային մարմնի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հավաքագրվող հարկատեսակների մասով չկատարված հարկային պարտավորությունների գումարից.

9) Հարկ վճարողի դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձման ներկայացված գումարը գերազանցում է նույն ժամանակաշրջանի ավելացված արժեքի հարկի հաշվարկում

նշված՝ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների շրջանառության 20 տոկոսը.

10) հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 18-ամսյա ժամանակաշրջանում ներկայացված ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկների թիվը գերազանցել է 3-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ ճշգրտված հաշվարկները ներկայացնելու պահանջ սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.

11) հարկային մարմնի կողմից մշակված՝ ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության ավտոմատացված համակարգի միջոցով հարկ վճարող ճանաչվել է որպես ստուգման ենթակա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ